

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՁԳԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏԸ

Միջազգային ասպարեզում լայն ճանաչում ու ազդեցություն ունեցող հայազգի տնտեսագետները փոքրաթիվ են: Նրանցից, թերևս, ամենանշանավորը Արմեն Ալչյանն է՝ ծագումով հայ ամերիկացի տնտեսագետ (ծնվել է 1914 թ. Ֆրեզնոյում): Որքան էլ զարմանալի է, բայց փաստ է, որ Հայաստանում նրա մասին քչերը գիտեն և քիչ գիտեն: Մինչդեռ Ալչյանը մեծարժեք գիտական ժառանգություն է բոլել, որն այդպես էլ առայժմ պատշաճ ուշադրության չի արժանացել ՀՀ-ում: Որքան մեզ հայտնի է, նրա աշխատանքներից որևէ մեկը հայերենով դեռևս չի հրատարակվել: Տնտեսագիտության մեջ Արմեն Ալչյանի գիտական ավանդի վերաբերյալ չափազանց խոսում և արժանիքներն բարձր են օտարների գնահատականները: Այդ առումով, նրա մասին ընդհանուր և ամբողջական պատկերացում կազմելու համար, լիովին բավարար կլինի դրանցից մի քանիսի վկայակոչումը:

Համարվում է, որ «Արմեն Ալչյանը նպաստել է տնտեսագիտական մտքի մի քանի դպրոցների հիմնադրմանը: Նա ամենաազդեցիկ հեղինակություններից մեկն է շուկայի կառուցվածքի, սեփականության իրավունքների և ֆիրմայի տեսության բնագավառներում: Ալչյանի գործունեությունը տևել է շուրջ յոթ տասնամյակ: Նա անջնջելի հետք է թողել տնտեսագիտության մեջ և ուսուցանել ու ոգեշնչել է ուսանողների սերունդների»:

«Ալչյանը կարևոր ավանդ է ունեցել ինֆլյացիայի և գործազրկության տնտեսագիտական վերլուծության, ինչպես նաև ծախսերի տեսության և ֆիրմայի տեսության ձևավորման մեջ: Նա առաջատար դեր է խաղացել սեփականության իրավունքների տեսության մշակման գործում: Նրա շարադրանքն առանձնանում է առօրեականից էականի տարանջատման ունակությամբ և, ամենից առաջ, այն հանգամանքի ցուցադրման հմտությամբ, թե ինչպես են մույն հիմնարար տնտեսական ուժերը գործում ակնհայտորեն լրիվ տարբեր և բազմապիսի սոցիալական միջավայրերում»:

Մեկ այլ տեղում կարդում ենք. «Ազատության ֆոնդը հայարար է ներկայացնելու Ա. Ալչյանի «Երկերի ժողովածուն» երկու հատորով՝ ի մի բերելով նրա ամենաազդեցիկ էսեները, հոդվածները, խմբագրականները և դասախոսությունները, ապահովելով տնտեսագիտության մեջ հիմնախնդիրների լայն շրջանակի վերաբերյալ նրա մտորումների ընդգրկում համապատկերը»:

Ա. Ալչյանը մեծ ավանդ է ունեցել նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության զարգացման գործում: Սեփականության իրավունքների և տրանսակցիոն ծախսերի վերաբերյալ աշխատությունների շնորհիվ նա համարվում է այդ ուղղության հիմնադիրներից: Ուշագրավ է Տնտեսագիտության

քարճրագույն դպրոցի (ԴՄ-ԲՄԹ) ռեկտոր, պրոֆեսոր Կուզմինովի և ինստիտուցիոնալ վերլուծության լաբորատորիայի վարիչ Յուդկևիչի հետևյալ դիտարկումը. «Գրեթե բոլոր ինստիտուցիոնալիստները (նրանք, ովքեր ստեղծել են արդի ինստիտուցիոնալ տեսությունը) Նոբելյան մրցանակակիրներ են: Մենք ասում ենք «գրեթե», որովհետև Նոբելյան մրցանակ դեռևս չեն ստացել սեփականության իրավունքների տեսության հիմնադիրներ Արմեն Ալչյանը և Հարոլդ Դեմսեցը»¹:

«1950 թ. Արմեն Ալչյանը հրատարակեց իր «Անորոշությունը, էվոլյուցիան և տնտեսագիտության տեսությունը» հոդվածը՝ ապշեցուցիչ յուրօրինակությամբ մի հոդված, որի կարևորությունն անմիջապես ընկալվեց՝ նրան բերելով միջազգային ճանաչում: Պարզ դարձավ, որ տնտեսագիտությունն ունեցավ մի նոր մաստեր (քարճրակարգ, ազդեցիկ հեղինակ-Ա. Վ.)»:

«Քաղաքատնտեսության հանդեսում» (*The Journal of Political Economy*) լույս տեսած այս հոդվածը ներկայացվում է Չեր ուշադրությանը: Հուսով ենք, որ դա կնպաստի Ալչյանի անձի ու գիտական ստեղծագործության նկատմամբ համարժեք վերաբերմունքի ձևավորմանը նաև Հայաստանում²:

Uncertainty, Evolution, and Economic Theory

Armen A. Alchian

The Journal of Political Economy, Vol. 58, No. 3. (Jun., 1950), pp. 211-221.

Stable URL:

<http://links.jstor.org/sici?sici=0022-3808%28195006%2958%3A3%3C211%3AUEAET%3E2.0.CO%3B2-K>

The Journal of Political Economy is currently published by The University of Chicago Press.

Your use of the JSTOR archive indicates your acceptance of JSTOR's Terms and Conditions of Use, available at

<http://www.jstor.org/about/terms.html>. JSTOR's Terms and Conditions of Use provides, in part, that unless you have obtained prior permission, you may not download an entire issue of a journal or multiple copies of articles, and you may use content in the JSTOR archive only for your personal, non-commercial use.

Please contact the publisher regarding any further use of this work. Publisher contact information may be obtained at

<http://www.jstor.org/journals/ucpress.html>.

Each copy of any part of a JSTOR transmission must contain the same copyright notice that appears on the screen or printed page of such transmission.

¹ Вопросы экономики, 2010, N 1, с. 83.

² Հոդվածը հայերեն թարգմանելու թույլտվության համար ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ **Ատոմ Վարդանյանը** սահմանված կարգով դիմել է Չիկագոյի համալսարանի հրատարակչությանը և ստացել պաշտոնական համաձայնություն. թույլտվության արտոնագիր՝ 105721: Ըստ այդմ՝ պահանջվում է ներկայացնել հոդվածին և հեղինակային իրավունքին առնչվող հետևյալ տեղեկատվությունը: